

## Ա. Զ. Դ.

Քանի որ Հայ Պատմագրաց և ընտիր մատենագրաց խնամեալ լիակատար մի ժողովածոյն պատրաստելու դեղիկ խորհուրդը կայ, անօգուտ չէ անշուշտ որ ամէն բանաէր, որչափ ալ դուզնաքեայ լինի իւր վաստակը, փութայ շափաւ հրապարակ հանել զայն, որպէս զի ապա, օրինակաց բաղդատութեան պահուն, ուշադրութեան առնուին իւր հայեացքները, եթէ տեղի կայ, և ըստ այնմ. վերջնականապէս հաստատուին ընթերցուածները:

Սոյն այս մտածութեամբ է որ կը համարձակինք, մեր տչքին հանդիպած մի քան հետեւեալ կէտերը, Հրատարակիչ Պատուարժան Յանձնախմբին ուշադրութեանը յանձնել:

1 Մարտ 1903

Թէհըան.

Ա.

## Ե Ղ. Ի Շ Է

Եղնիայ և Ա. Գրոց ողորկ՝ յստակ և կանոնաւոր շարադրութիւնը մեզ համեմատութեան չափ առնելով, կը տեսնենք որ Եղիշէի ինչ ինչ հատուածները բոլորովին խոլթ և և անհարթ են և նոյն իսկ անհամեմատ: Հեղինակին սովորական ոճին և գրչութեան եղանակին կը հակառակեն: Տեղի կայ ուրեմն մտածելու թէ անհմուտ կամ անուշաղիք ընդօրինակողաց կողմանէ աղաւաղութիւնք մտած են: Քննենք նախ այս կարգի խանգարումները որք զուտ շարադրական են և աղաւ նկատի առնենք մի քանի պարսկական բառերուն աղաւաղեալ հայ ձեւերը, որոց ծագումը և իսկական նշանակութիւնը ճշգուած ըլինելուն՝ տպագրութեանց մէջ նոյն

աղաւաղութեամբ շարունակաբար մշտնջենաւորած եկած են  
մինչեւ յայսօր:

## I.

«Ոչ յանձին կարօտութիւն երկրաւոր առատ դիտու-  
թեան լրման այլ այցելութիւն երկնաւոր անտեսութեանն՝  
որ մատակարարէ, եւն...»

Իրաւ է, իմաստը կը հասկցուի և ճիշդ ալ թարգմա-  
նած է Պ. Հ. Պուկասեանցը

«Ոչ թէ քո երկրաւոր առատ դիտութեանդ կարօտը  
լրացնելու համար, այլ որպէս զի երեխ երկնաւոր անտեսու-  
թեան տնօրինութիւնը որ, են...»

Սակայն անաշխատ և առաջին հայեցողութեամբ չէ այս  
խմացումը և ոչ ալ խօսքին քերականական շարքէն առաջ-  
նորդուելով՝ որ բոլորովին խորթ և անսովոր է, այլ գրեթէ  
գուշակարար և չեղինակին դիտման հետեղութեամբ։ Մեծ  
բարեբախտութիւն պիտի լինի եթէ նոր և ուզդագոյն ըն-  
թերցուած մը ձեռք բերուի ընտրելագոյն օրինակէ մը։

## II

«Այլ դու, ով մեծ ի դիտութեանն Աստուծոյ, առ ի՞նչ  
արդեւք հրամայեսցես, քան եթէ հրամայեցի լաւագու-  
նացնի։»

Այս հատուածին վերջին անգամը բոլորովին մութ և  
անյարիր է և յունաբանութեամբ ալ անմեկնելի։

Պ. Պուկասեանցը կը թարգմանէ.

«Բայց դու . . . ի՞նչ պատուեր է արգեօք, որ տալիս ես  
ինձ կառարելու, անշուշտ լաւագոյն պատուեր։»

Յայտնի է որ բռնաբարեալ յօժարութեամբ է այս թարգ-  
մանութիւնը քան քերականական վերլուծութեամբ։

## III.

«Զուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն ծնող չարեաց»։

Այս կոչումը, որ Եղիշէն կընէ, ոչ նախընթաց խօսքեռուն հետ կը կապուի և ոչ հետեւորդաց. այլ բոլորովին մի տարանջառ՝ ուրոյն և անկախ գաղափար է որ մէջ կիյնաց: Թէ Դաւիթ երեց Մամիկոն մը Եղիշէն Վարդանանց պատերազմի պատամաւթիւնն ուզած ինի, և այս՝ երկնաւոր սիրոյ նշանակ ըմբռնուի քրիստոնեայ երկիւղած Մատենագրէն, այս՝ լաւ, այլ զուգութիւն անզուգութիւնը, այսինքն՝ միաբանութիւնը անմիաբանութիւնը ինչ զործ ունին այսաեղ, և ո՞ր գաղափարի հետ պէտք է տսոնք կապել: Երեխ կամ աեղը փոխած է այս պարբերութիւնը և կամ գաղափարներն իրար կցելու համար շղթայէն մի քանի օդակ ինկած են:

## IV.

«Եթէ կարի ոք առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ, և մաօքն աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան զբազում: որպէս և տեսանեմք իսկ, ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ և որ մեծն է քան զամենայն: Թագաւոր՝ եթէ ոչ ունի զիմաստութիւն աթուակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուծ գոլ»։

Աշխարհաբար թարգմանութեանը մէջ կը կարդանք.

«Եթէ որ մէկը չափազանց ծոխացած լինի աշխարհական մեծութեամբ, բայց մտքովն աղքատ լինի, այնպիսին շատ շատերից ողորմելի է, այսպէս մենք տեսնում ել ենք՝ ոչ միայն հասարակ մարդկանց մէջ, այլ և նորա մէջ, որ ամէնքից մեծն է: Մի թագաւոր եթէ իւր աթոռի հետ իմաստութիւն էլ չունի, չէ կարող իւր վիճակին յարմար լինել»։

Պոլսոյ տիպն\* ալ, կը տեսնենք որ, ծիշդ այս ըմբռնման կը հակի և աւելի բացորոշ ուղղագրութեան մը հարկը զգա-

\* ձանիկ Արամեան—Բագազր, 1871:

Ի՞ով կը դնէ.

• • • • • այլ և յոր մեծն է քան զամենայն։ Թագաւոր • • • • • Զենք կարծեր թէ այս սրբագրութիւնը մի այլ ընտրելագոյն օրինակի հետեւղութեամբ կատարուած լինի և կամ թէ Անձեւացեաց ըսուած օրինակը, որուն հետեւած է միշեալ տիպը, Ճիշդ սոյն ուղղագրութիւնն ունենայ։ Մեզ պարզապէս ձեռներեցութիւն մը կը թուի այս սրբագրութիւնը։ Խմասոր, ինչպէս ըսինք, իրենց ըմբռնման և հասկացողութեան պատշաճեցնելու նպատակաւ։

Ինչ որ ալ լինի, թէև չենք կրնար տիրապէս ըսել եթէ սխալ է այս ըմբռնումը, սակայն այնքան ալ ապահով և անքասիր չերեկիր մեզ։

Մենք կը կարծենք թէ այս տեղ կետագրութեան սխալ կայ. այն վերջակէտը որ «թագաւոր» բառը կը զատէ նախընթաց շալքէն, բոլորովին ումակէտ և անտեղի է։ Պէտք է բառնալ այս հանդսատեան կէտը և կցել «թագաւոր»ը նախ կին խմաստին հետ, պարզ միջանկեալ համարելով «և որ մեծն է քան զամենայն», միջանկեալ սաստկացուցիչ որ աւելի ծանր և անախնկալ խմաստի մը կը պատրաստէ սովորաբար և որ այնքան շատ գործածուած է եղիշէն որ կընայ ըսուել թէ սա մի յոյժ նախասիրած ոճն և դարձուածն է նորա։ Այսպէս զոր օրինակ։

• • • մոլորեալ էք ի ձշմարիտ օրինացս մերոց, և զաւտուածս անարգէք ... եւ որ մեծ քան զամենայն՝ զի հանապաղ ի կանայս ոչ մերձենայք։

«Եւ որ մեծն քան զամենայն ասացից, ոչ միայն մարդիկ յերկրի այլ և հրեշտակէք յերկինս զերեսս դարձուցին ի մէնջ .....»

«Նաեւ որ մեծն քան զամենայն, որ ի բռնութենէ, ոք ակամայ կալեալ էք զմողութիւնն, հրովարտակս առաքէր յարքունուստ՝ անդրէն ունել զքրիստոնէութիւնն։»

Եւ այլ շատ տեղեր։ Մինչդեռ ակնարկեալ համարին արդի շարքը և կետագրութիւնը ոչ ուրեք կը տեսնուի նոյն մատենագրութեան մէջ։ Պատճառ մը չունինք ուրեմն հեղինակին այս սովորական ոճէն հեռանալ և քմածին կար-

գաղըութիւններ ընելու : Յառնանք պարզապէս վերջակետը և կապենք «Թագաւոր»-ը նախընթաց իմաստին չետ, և ահա առն ինչ իւր բնական ձեխն՝ ոճին և իմաստին կը դառնայ:

Մեր այս բայատըութեամբ կառաջարկենք ուրեմն կարդալ այդ համար.

«Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ և մոռօքն աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան զբազումն, որպէս և ահասնեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ և, որ մեծն է քան զամենայն, թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գու» : Որ կը թարգմանուի աղատօրէն.

«Եթէ մէկը աշխարհական մեծութեան ծայրը հասած լինի, այլ սակայն մաքով խեղճ և աղքատ, այնպիսին շատ շատերէն աւելի ողորմելի է, ինչպէս որ (ասոր հաստատութիւնը) կը տեսնենք ոչ միայն հասարակ մարդոց վրայ, այլ որ աւելի ուշագրաւ է, թագաւորն իսկ եթէ իմաստութիւնը իրեն աթոռակից չունի, չկրնար իւր զիբքին վայելուչ բարձրութիւնը պահելու» :

Ասով այլ ևս տեղի և հարկ ալ չմնար «ոչ միայն հասարակ մարդկանց մէջ, այլ և նորա մէջ» ի պէս անհեթեթ և խորթ բայատըութեանց:

## V.

«Միհրներսէ վզուրկ, հրամանատար երան և Աներան, Հայոց մեծաց ողջոյն շատ» :

Այսպէս կը դնէ Պոլսոյ ահազը զոր վերև յիշեցինք և որ սովորաբար ուղղագոյնն է, այլ սակայն ստորակեաի շփոթութիւն մը կայ այս տեղ, Պէտք էր վզուրկ-ին առջեի ստորը «Միհրներսէ», ին առջել զնել, որպէս զի վերագիրը «հրամանատար», ին վրայ իյնայ և ոչ Միհրներսէ ին, քանզի սա երբէք մեծ մակղիբով պատուած չէ: Վզուրկ (մեծ) հրամանատար էր այս, այլ ոչ երբէք մեծն Միհրներսէն:

Յաենք նաև այս առթիւ որ օրինակաց մէջ «վզութկային տեղ «վզըուկ» կը տեսնուի որ յայտնի սխալ է, քանզի պարսկերէն լեզու և մէջ դոյտթիւն չունի այս վերջինը, այլ միշտ կամ բրդ կամ առաջ տեսնուած է:

Դոյնագէս անիրաւ կամ աներանի ալ «տաներան» կը տուների մի քանի տիպերուն մէջ որ անակդի է, քանզի բուն բառը պարսկերէնի մէջ ալ էր և կը սպասասխանէ մեր «Արեաց և Անարեաց» ձերին: Կը ըստի, զօր մին արան զմին որով կը հասկցուի Արեաց աշխարհի: Այս Պահան էկուի մէջ բարի, յարգի, պատուական կը նշանակէ, իսկ ա կամ ան ժխտականով՝ նորա հակառակը: Հին Պարսիկները իրենք զիրենք յորջորջելով, ուրիշ ազգաց վրայ գերակշռութիւն մը կը սեփականէին իրենց մինչ օտարը, որ պարսիկ չէր, անարդ ստորին, աներ էր, ինչպէս և Յոյնք բարբարոս (բիբա, անմշակ) կը ճանաչէին ամեն անոնք որ իրենցմէ չէին:

## VI.

«Կարասի որ ժողովի, ասեն, յոյժ մեղք են, բայց զաղքասութիւն առաւել քան զյոյժ զովեն»:

Թուար'ութեան մը մասն է այս համարը՝ ուր, վերի համարներուն ընդհանուր ոճին և կարգադրութեանը հետեւով, պէտք էր որ խօսքը կաղմող երկու նախադասութեանց երկրորդ առաջնոյն հակադրեալ լինէր իմաստով: Դնենք, աւելի բացայացութեան համար, վերի տուներն ալ ուր հեղինակն ինքնին որոշակի կը յայտնէ իւր միտքը և սկզբունքը.

«Մի հաւատայք, կըսէ Միշրներուեհը իւր հրովարտակին մէջ, առաջնորդացն ձերոց՝ զոր նածրացիսդ անուանեք, քսիդի յոյժ են խարերայք, զօր բանիւք ուսուցանեն՝ դործողք ոչ առնուն յանձն: Միս ուտել, ասեն, ոչ են մեղք» — և ինքեանք ուտել ոչ կամին: Այն առնել, ասեն, արժանէ, — բայց ինքեանք և հայել ի նա ոչ կամին: Կարսոի որ

ժողովի, ասեն, մեղք են յոյժ. — բայց զադքասութիւն առաւ և լ քան զյոյժ գովեն:

Այս վերջին տան մէջ, ինչպէս կը տեսնուի, հակադրութիւն չկայ, երկրորդ իմաստն ալ առաջնոյն հաստատութիւնը՝ շարունակութիւնն է:

Կարասի, այսինքն ինչք ստայուածք ժողովի մեղք է, կը բանեն. » այսուեղ կապասուեր որ ետեւ յարեր. և իրենք անյագարար հարստանալու ետեւ են. և որովհետեւ այս յայտնապէս անակեղի է, քանզի սորա հակառակին համար կը պարսաւուին քըիսանեայ առաջնորդք ի Միհրներսէցէ, հարկ կը լինի ուրեմն փոխել խօսքին կերպարանքը և ըսել. « Կարասի ժողովի մեղք չէ, կը սեն, բայց ստիպյն աղքատութիւնը աւելի կը պանձացնեն»:

Ուրեմն, այս տեսութեամբ, կամ այն « յոյժ մեղք են. ըմեղք չեն» կարգալու է պարզապէս, և յոյնժամ իւր տեղը և նշանակութիւնը պահած կը լինի հակադրութեան յայտարար « բայց » շաղկապը, և կամ բոլորովին վերցնելով այս մերջինը՝ զօղիչ « և » մը դնելու է տեղը, որով այս տունը վերի հակադրեալ շարքն անջատած և յետագայ նոյնիմաստ տուներուն հետ կապած կը լինինք, ուր թուարկանութիւնը շարունակեալ ձեւ մը կառնէ. զօր.

« Կարասի որ ժողովի, ասեն, մեղք են յոյժ, և զադքասութիւն առաւել քան զյոյժ գովեն: Յարգին զթշուառ ուութիւն, և պարսաւեն զյաջողուածու: Մաղք առնեն զանուն բախտի, և զիստաւորութիւն յոյժ այպանեն: Աիրեն զանշքութիւն հանգերձից, և յարգին զանարգս քան զպատականս: Գովեն զմահի, և պարսաւեն զկեան: Անարգին զծնունդս մարդոց, և զովեն զանորդութիւնու:

Տեսնենք այս ենթադրութեանց որը պիտի հաստատեն ընտիր օրինակները:

## VII.

« Արդ եթէ զմահ շար աստուածն արար, չինչ զոյացութիւն երեխ մահու ի միջի. և ոչ ինչ»:

Այս աեղ քար գայթակղութեանը «գոյացութիւն» բառն  
է, որ չգիտցուեր թէ ինչ մտքով առնուելու է, որպէս զի  
յայտնի և որոշ իմաստ մը ելլէ: Եղիշէի մէջ մի քանի ու-  
թիշ տեղեր ալ դործածուած է սոյն բառը և միշտ «գոյու-  
թիւն» և «լինելու թիւն» նշանակութեամբ, բայց այս տեղ  
այս առմամբ ալ իմաստը չշտկուեր և միշտ մուժ կը ֆնայ:  
Կը կարծենք եթէ «սրա աեղ մի ուրիշ նպատակայարմաք բառ-  
պիտի գտնուի անշուշտ ընտիր օրինակի մը մէջ: Նատ հա-  
ւանական է նաև որ վերջակէտէն ետքը եկաղ «Բայց զբարի  
Առաւծոյ զարարածոն խանգարեաց» խօսքը որ հակառա-  
կորդին բերանը կը գնեն տպաղիրը և թարգմանիչք, նոյն  
իսկ շարուն սկութիւնը լինի վերի հասածին և ամէնքը միա-  
սին մի համօրէն ամբողջութիւն կազմեն: Ընթերցողին զիւ-  
րութիւն ընծայելու համար, զնենք այս աեղ սոյն հասուածն  
ամբողջ հետեւելով վերոյ ակնարկեալ Պոլսոյ ապին (1871).

Արդեւ կմահ չար աստուածն արար, զի՞նչ գոյացութիւն երեխ մահու ի միջին և ոչինչ:— Բայց զբարի Աստուածոյ զարարածն խանգարեաց:— Եթէ այդ այդպէս է՝ նմա և բարի իսկ ասել ոչ մարթի, այլ կիսազործ ապականացու:

Պ. Հ. Առկասեանցը կը թարգմանէ.

Արդ՝ եթէ մահլ չար աստուածն է ստեղծելը, մահուան  
գոյացութիւնն ինչով է երեսում միջ տեղ՝ ոչնչով։— Բայց,  
ասում էի, բարի Աստուածոյ արարածներին խանդարեց։— Եթէ  
այդպէս է, ելն։»

## 6. Ergebnis

